

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

«ուղարկոյ համար»
Տարեկան 10 Տր.
Վեցամսեայ 5 »
Սրատասակմանի հա-
մար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Ամերիկայի համար
Տարեկան 2.50 Տր.
Վեցամսեայ 1.25 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ
Մանուցման տողը առաջին
երեսին համար 40 սանթիմ
ե. իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանթիմ ե. երեքին
անկի անգամներու համար
20 Օլո գեղը կոչոյս :

ՇՄԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՆԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇՄԱԹԻ ԵՒ ՇՄԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ դրկեղ
Խմբագրութեան հասցեին
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ԵՐԿՐՈՐԳ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ Ի ՆՊԱՍՏ

Վանայ Սովետական
—
Ժողովրդի ցանկութիւնով կը
խաղացուի երկրորդ անգամ ՎԱ-
ՆԱՅ ՀԱՅԴՈՒԿՆԵՐ (սրբագրեալ),
այս գրչեր, Անկէլ Սլավոֆի սրա-
հին մէջ :
Գիները չափաւոր. 50 սանթիմէ
մինչեւ 5 ֆրանք տոմսակներ :
Տոմսերը վճարուած է տուներ
չլրկել. ցանկացողները կարող
են գնել Տ. Յովսէփ Բարսամեանի
վաճառատունէն :
Ելեւմուտքի վերահսկող յանձ-
նախումբը բաղկացած է Տ. Տ.
Տօքթ. Աթաբէկեանէ, Յ. Բար-
սամեանէ և Տիգրան Աճէմեանէ :

Բացի այն որ ներկայացումը
կը տրուի վեհ նպատակի մը հա-
մար, բիէսն ալ գեղեցիկ է բա-
րոյականութեան տեսակետով :
Հաւատացած ենք որ հայ հա-
սարակութիւնը թէ վեհ նպատա-
կին ծառայած ըլլալու, և թէ
բարոյական զուարճութիւն մը
ստացած լինելու համար պէտք է
ներկայ գտնուի ներկայացմանը :

ԱՊՍԱՍԲՈՂ ԳԵՐԻՆԵ- ՐԻ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Մինչեւ հիմա սովորական ե-
րեւոյթ էր տեսնել միայն զանա-
կան պետութիւնների դաշնակ-
ցութիւն որեւէ զօրաւոր և վտանգ
սպառնացող պետութեան դէմ :
Բայց երբէք, եթէ չեմ սխալ-
վում, տեսնված չէր որ քաղա-
քական անկախութիւնից բոլորու-
վին զուրկ և ստրուկ ազգերը,
որոնք դարբերով տանջվել են
նոյն օտար բռնակալի խարաղանի
տակ, ձեռք ձեռքի տային իրանց
ճնշող լուծը խորտակելու հա-
մար :
Այսօր այդ երեւոյթը տեղի
ունեցաւ :
Անցեալ օրայ Հայ. Յեղ. Դաշ-
նակցութեան և Մակեդոնական
ժարճրագոյն, կոմիտէի միասին

տւած յայտարարութիւնը ցոյց է
տալիս որ երկու գերի ազգերի
յեղափոխական մարմինները որո-
շել են միասին գործել թուրքի
այդ երկու ժողովուրդների ընդ-
հանուր և ամենակատաղի թշնա-
մու դէմ :

Այսօր, այդ երկու ազգերի
յեղափոխական մարմինները դաշ-
նակցած՝ դիմում են Եւրոպական
պետութիւններին, որոնք «Խա-
ղաղութեան ժողով» կոչված կա-
տակերգութիւնը սկսած միջոցին,
երբէք չէին մտածել թէ կան
թոյլ, փոքրիկ, գերի, բայց կո-
րովի և ազատութեան ծարաւով
այրված ժողովուրդներ, որոնք
նախ ուղում են ազատվել ապա
խաղաղ մնալ :

Մեծերի սարքած կատակեր-
գութիւնը կատարվում էր Լա-
հեում. կոմիք դիպլոմատները
թէեւ անշնորհք, բայց և այնպէս
խաղում էին. և ահա երկու մո-
ռացված գերի ազգերի յեղափո-
խական մարմինները յայտարա-
րեցին դրանց :

— Մեծեր, եթէ մեր ցաւերը
դարման չը գտնեն, մենք հա-
կառակ կը լինենք ձեր նախա-
գծած խաղաղութեան, մենք
կուր կսկսենք և կը բռնկեցնենք
այն մեծ հրգեհոյ. որից դուք
սարսափում էք : Այո, կը կըռ-
ւենք. որովհետեւ այդ է պա-
հանջում մեր ժողովուրդների ար-
ժանապատութիւնը և գոյութեան
իրաւունքը :

Մեր ուրախութիւնը մեծ է :
Այսօր Փոքր-Ասիայում սպորդ
հայ և Բալկանեան թերակղզու
Մակեդոնացի ժողովուրդները,
ձեռք ձեռքի տւած, յայտարա-
րում են Եւրոպական դիպլոմատ-
ներին—դուք ձեր գձուծ բռնա-
կալական հաշիւներից դրդված
որոշում էք պահել մի ներկված,
արիւնոտ բժմի ու մեր ստրուկու-
թիւնը երկարել. բայց մենք էլ
մեր հաշիւները ունենք մաքրե-
լու : Իսկ վաղը, նոյն ժողովուրդ-
ները գէնքով դաշնակցած՝ Սուլ-
թանին կը յայտարարեն :

— Բաւ է, խալիֆա, եկաւ
ժամանակը մեր դարեւոր հաշիւ-
ները պահանջելու, մեր ստրուկա-

կան արատը մաքրելու և մեր
երկրի, մտքի ու խղճի ազատ
տէրը դառնալու :

Հաւատում ենք և սրտատրուփ
սպասում այդ գեղեցիկ օրին...
ՎԱՐԿՕ

ՓՈՔՐՆԵՐԻ ԻՐԱՌՈՒՆՔԸ

Մի անբռնաբարելի իրաւունք
ունին փոքր, ճնշւած ազգերը.
ձգտիլ իրենց գերութեան չլթա-
ները խորտակելու :

Այո՛, դա նրանց միակ գերա-
գոյն, միակ սրբազան և ամէնա-
առաջին իրաւունքն է. իրաւունքի
հետ միասին դա նրանց պարտա-
կանութիւնն էլ է :

Երբ մի ժողովրդի ամէնատար-
րական, ամէնաանհրաժեշտ իրա-
ւունքները գաղանաբար բռնա-
բարւած են. երբ այդ ժողովրդի
ոչ մի անհատը վտանգ չէ թէ իր
զուրկը վաղը եւս իր տեղում կը
լինի անփափա. երբ ոչ ոք իր ինչ-
քը, իր կայքն ու իր պատիւը
պաշտպանելու ոչ մի միջոց չու-
նի—այդպիսի հասարակութեան
միակ իրաւունքն ու պարտակա-
նութիւնն է ջախջախել այն լու-
ծը, որ ծանրանում է իր վրին,
կտրել այն ձեռքը, որ իրեն պա-
հում է գերութեան մէջ, փշրել
այն շղթաները, որ կաշկանդում
են նրա ազատութիւնը :

Այս է ճնշւածի պարտքը :
Գիտութեան տարածումը, գե-
ղարուեստների զարգացումը,
կրթութեան ընդհանրացումը՝
այս ամէնը լաւ բաներ են, բայց
ստրուկի, բռնաբարւածի համար
նրանք աւելի երկրորդական են :
Նրա համար մի բան կայ հրա-
մայական ու նախամեծար. կուել
իր ազատութեան համար :

Պէտք է թողնել գիրքն ու դըպ-
րութիւնը, արհեստն ու կրթու-
թիւնը. պէտք է ծաղրել, մի
կողմ գնել ամէն ինչ և փրկարար
զէնքի կոթը սեղմել իր կրծքին...
Սա է ստրուկի գերագոյն ի-
րաւունքը և պարտքը :

Բայց ստրուկը ճնշւած է, ո-
րովհետեւ թոյլ է :

Շատ կան թոյլեր ու ստրուկ-
ներ :

Եւ նրանք պէտք է միանան
ընդհանուր թշնամու դէմ. Աւելի
եւս. բոլոր թոյլերը պէտք է
ձեռք ձեռքի տան բոլոր զօրեղ-
ների դէմ, բոլոր ստրուկները՝
բոլոր բռնակալների դէմ :

Բերկրանքով մենք տեսնում
ենք հայ և մակեդոն կազմակեր-
պութիւնների միացման այն ի-
րական փաստը, որ մեզ աւետում
է նրանց միացեալ յայտարարու-
թիւնը :

Դա թոյլերի իրաւունքի առա-
ջին գործադրութիւնն է : Թոյլ-
ները միանում են զօրեղ բռնա-
ւորի դէմ :

Այդ միութիւնը էական ոյժ է :

Բռնակալութեան մէջ ամէն
գործ, ամէն պաշտօն, ամէն հա-
սարակական կոչում ծախում է .
իսկ թոյլերի մէջ առնելը և ծա-
խելը կորել են, գոյութիւն չու-
նին :

Բռնակալի գործաւորը դրամի
համար է կատարում մի որեւէ
գործ. իսկ ազատութեան ձգտող
ստրուկի աշխատաւորը լուծ է իր
ներքին բարոյական հրամանին :
Նա ոչ միայն դրամ, վարձատրու-
թիւն չի ստանում, այլ և իր անձն
է զոհում :

Եւ այս բռնաբարւածի ամէնա-
զօրեղ կողմն է :

Եթէ մի մարդ ձեռք է վերցը-
րել իր գլխից՝ նա ուրիշների
գլխի տէրն է : Բռնակալները
լաւ պէտք է իմանան այդ ճըշ-
մարտութիւնը :

Իսկ եթէ իր գլխից ձեռք
վերցնողը մի անհատ չէ, այլ մի
ամբողջ ժողովուրդ՝ այն ժամա-
նակ նրա ուժի առաջ ոչ մի ար-
գելք յաւիտեանս դիմանալ չի
կարող : Նա կը ճնշւի ժամանա-
կաւորապէս, բայց երբէք չի
մեռնի :

Անձնագոհութիւնը ճնշւածնե-
րի թէ անհատական և թէ հա-
մայնական դերագոյն յատկու-
թիւնն է :

Միութիւն և անձնագոհութիւն՝

ահա թոյլերի իրաւունքը և պարտքը . դա՛ է և նրանց ոյժը . Հայ և Մակեդոնական խնդիրները հասունանում են : Նրանց յեղափոխական կազմակերպութիւնները միութեան դրական քայլեր են անում : Մենք սրտի բեկրանքով ողջունում ենք այդ ուրախալի երեւոյթը :

Իսկ անձնագոհութեան փառաւոր օրինակներ թէ մեր ժողովուրդը, թէ յեղափոխականները բաւական ցոյց են տւել աշխարհին : Ցանկանք աւելի եւ աւելի աճում այդ թանկագին յատկութեան :

ԳԱՍՊԱՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Վան, 21 Մայիս

Ներսէս սրբազան սակաւախօս, խոհուն և աշխոյժ կերուի . առհասարակ իր թողած տպաւորութիւնը լաւ է : Եթէ չը թողու որ ամէն մարդ առաջնորդարանի մէջ ուզէ ազդեցութիւն բանեցընել, շատ ականջ չը կախէ արգի ինքնակոչ վարչութեան և առաջնորդուի իր սեփական կամքէն ու փորձառութենէն, կը յուսացուի թէ պիտի կարողանայ գործ մը տեսնալ : Վանայ մէջ Սրբազանը պիտի կարենայ վայելել կարգ մը անկեղծ անձանց աշակցութիւնը, եթէ ինքը կարենայ դանոնք գտնել և իր շուրջը հաւաքել :

Գպրոցներու և եկեղեցիներու վիճակը բարւոքելու համար մեծամեծ ջանքեր հարկաւոր են . և այդ կարճ միջոցի մէջ չը լինիր, ու կը յուսանք որ Ներսէս եպիսկոպոս պիտի ուզէ յօգուտ Վանայ ընդարձակ թեմին երկար մնալ հոս, կուրծք տալ դժուարութեանց, իրերն իրենց նախկին վիճակին բերելու :

Ներսէս եպիսկոպոսին անդրա-

նիկ քարոզը բաւական համարձակ և անկեղծ էր : Անով յայտարարեց որ ինքը խիստ բնաւորութեան տէր է, վեր ամէն կուսակցական հաշիւներէ, գործիք չը լինիր շահասէր անձանց, չը պիտի շոյժ ժողովուրդը . այլ ուզած ատեն պիտի ձգէ հեռանայ երբ իրեն համամիտ չը գտնէ վանեցիները : Եթէ Սրբազանը իր յայտարարածին համեմատ գործէ, կը յուսանք որ վիճակը բարւոքուի :

Անձրեւներ եկան, բոյսերը վերակենդանացան . յուսով ենք որ յառաջիկայ հունձքը յաշոյ ըլլայ :

Կաթոլիկ դարձածները հետըզհետ մայր եկեղեցւոյ գիրկը կը վերադառնան . միայն սինակալէզները մնացած են, որոնք դեռ կը յաճին Ձեռօտանի շուրջը անկէ նետուած այլեւս անիւզ պատանները իրարու ձեռքէ յախշտակելու համար :

Որբախնամ գործը աւելի աչքի կը զարնէ . կաթոլիկներէն կը փախին . միսիոնարացը ընդհակառակը շատ գոհ են, հոն բռնի կրօնափոխութիւն չը կայ : Միսիոնարաց որբանոցին մէջ պատասպարութեան թիւը 400 մանչ և 200 աղջիկ է :

Պատրիարքարանի նահանգիս մէջ բացած չորս որբանոցներէն մին—իզական—Ս. Գրիգորի վանուց կը պատկանի . որբուհեաց թիւն է 45 . որբանոցը կը պահուի Նիւ-Եօրքի տիկնանց ծախքով : Մնուողը և դաստիարակութիւնը շատ գոհացուցիչ է : Կովկասի տիկնանց կը յանձնարարեմք այս լաւ հաստատութիւնը, եթէ կը փափագին որբուհիներ որդեգրել :

(Մշակ)

Սօֆիս, 21 Յունիս

Ինչպէս որ գրած էի, Օրմանեանի անունը չը յիշուելու հա-

մար ընդհանուր ժողով գումարուեցաւ : Քահանայի և թաղականներու բռնած ընթացքը պարզ կերպով կը յայտնէր որ ասոնք ժողովուրդի ձայնի հեղինակութիւնը ճանչնալու տրամադիր չեն և պառակտական վարչերով կուզեն խոչնդոտներ յարուցանել, չեմ գիտեր, զիբենք ի՞նչ մեծ պատասխանատուութեան առջեւ դանալով : Ժողովը տաք վիճաբանութիւններէ վերջը դիւան մը կազմեց երիտասարդներէ, և անմիջապէս խնդիրը քուէարկութեան ենթարկուեցաւ : Ժողովուրդի ամբողջութիւնը չը յիշուիլը որոշեց . իսկ փոքրիկ մաս մը բոլորովին չէզոք մնաց : Ուստի դիւանը ժողովուրդի կամքը քահանային ներկայացուց գշաւոր, որ Օրմանեանի անունը յիշատակելէ դադարեցնելու որոշումը կը յայտարարէր :

Ժողովը շատ օրինաւոր էր . մեր բնիկ հայաստանցի եղբայրները շատ դրձուած եկած էին . բայց իրենց վարմունքը գովելի էր : Սա ապացոյց է թէ ժողովուրդը միշտ արթուն է հոն, ուր իր ձայնը ազդու է :

Վերջերս Մակեդոնական լուրերը աւելի սպառնական գոյն կառնեն . թուրք զինուորներու մշտական շարժումները ու սպառազինութիւնները շատ մտատանջութիւն կը պատճառէ մակեդոնացի ժողովուրդին . խեղճերը կը զգան որ փոթորիկ մը պայթելու օրը մօտեցած է : Ալպանիացիներն ալ արձակ համարձակ կը սպանեն ու կը թալանեն պուլկար գեղերը, կառավարութեան հրահանգներ առնելով : Ազատ երկրի մէջ ապրող մակեդոնացիին պաղարիւնութեամբ չը դիտեր այս ամէնը, մանաւանդ Պուլկարիս ապաստածները : Մա-

կայն ցաւալի կէտն ան է որ Պուլկար կառավարութիւնն է իր սահմանները ամրացնող ու արգելք ըլլողը պուլկար ապստամբային խումբերուն . այնուամենայնիւ միքանի խումբեր ներս սպրդելով իրենք ալ սկսեցին նեղել թէ թուրք գիւղացին և թէ թուրք կառավարութիւնը :

Գանակցութեան և Մակեդոնական բարձրագոյն կօմիտէի յայտարարութիւնը ընդհանուր խնդակցութիւն պատճառեց : Մայրաքաղաքի բոլոր թերթերը, առանց բացառութեան, արտատպելով հրատարակած էին յայտագիրը : Ինչպէս կը տեղեկանանք այստեղի թուրք հիւպատոսը վրդովուեց է, և անմիջապէս հեռագրեր է եւրոպա : Երկու դարուոր կազմակերպութիւններու գրկախառնութիւնները տեսնալով՝ անշուշտ զգացած է թէ՛ սանչան է մի համերաշխ, անգուլ գործունէութեան և վերջին շունչ դիմագրելով երկու ազգերու իրաւունքները յարգել տալու : Յիշելու տեղն է Բարիզի պնակալէզ գրագետի բորբոսած ուղեղի գուշակութիւնները : Նա ալ կայրի և կը տեսնայ . ոչ թէ սովամահին ուժ մը պիտի նետեն, այլ ազատութեան համար մաքառող ժողովուրդին ազատութեան բախասնը պիտի պատրաստեն :

S.

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԿՐԷՏԷ

Այս վերնագրով յօդուած մը կայ «Թան»ի 13902 թիւին մէջ . Յօդուածը նախ կը պարզէ թէ ինչպէս ռուս կառավարութիւնը որոշած է ետ դարձնել Կովկաս գաղթած 40 հազար հայերը, իսկ թուրք կառավարութիւնը չընդունիր : Վերջապէս կը խօսի Սուլթանի Չարին ըրած առաջարկութեան մասին . այն է Կովկասի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՏԱՐՈՒՅԻՆ

189* թւականի ամառն էր : Ժնէւում, Ռուսոյի արձանի տակ նստած էր մի երիտասարդ հայ ուսանող : Երեկոյան արեգակի վերջին վարդապոյն ճառագայթները հրաժեշտի ողջոյնը տալով հրապուրիչ լճի խաղաղ ալիքներին՝ ուղղվում էին դէպի Մօմբլան, որ մի քանի վարկեանից յետոյ բոլորովին մարին ու իրանց աղբիւր լուսատուի հետ թաղնվին Ժիւրի լեռների ետեւում :

Լճի երկու ափերում մի առանձին կենդանութիւն էր տիրում . երկսեռ քաղաքացիները ձեր, երիտասարդ, մանուկ դուրս էին թափվել բնակարաններից, խեղդող գործատներից և վայելում էին զեղազարդ լճի հրապուրանքը : Մի խօսքով, ցերեկվայ տապին մեռած և անշարժ ժնէւը կենդանացել էր :

Ռուսոյի արձանի տակ նստած հայ երիտասարդը երկար տարիներ ուսանող էր և միշտ սիրով թափառում էր լճի եզերքում ամրան այս երեկոյաներին . բայց այսօր բոլորովին արամադրութիւն չուներ զբօսնելու :

Նա մտախոհ էր : Արեգակը բաժանվում էր աշխարհից մի քանի ժամով, իսկ մեր երիտասարդը ժնէւից ընդմիշտ : Վեց երկար ու ձիգ տարիներ նա ապրել էր եւրոպական այս գեղեցիկ և քաղաքակրթութեան հնար եղած բարիքներով օժտված քաղաքի մէջ : Եւրոպական ազգերի յոռաշարժական և ընդհանուր մարդկութեան բարիքին ծառայող զիջբունքները և գաղափարները այս քաղաքում էին աճել, զարգացել և խոր արմատներ գցել նրա ասիական բնութեան տակ սեղմված ու տրոփված սրտի և մաքր մէջ : Մարդկային թշուառութիւնը դարմանելու տրամադիր բարդ հարցերը երբեմն այս լճի ափին, նոյն Ռուսոյի արձանի տակ էին յոգնեցրել նրա երբեմնի անմշակ ուղեղը և յուզել սիրտը : Սրտի, մաքր և

գաղափարի շատ թարմ և անմոռանալի յիշատակները բոլորը միանգամից վերակենդանացած՝ այսօր մի տեսակ յարձակում էին գործում նրա վրա՝ ասելով .

— Ո՛ւր ես գնում երիտասարդ, խեղճ հայ, Գո հայրենիքում, ուր թագաւորում է խաւարը, բռնութիւնը, ուր միտքը ազատ թռիչք չունի, ուր սիրտը ազատ չէ բաբախում, դու չես կարող ծառայել մեզ : Գո վեց տարւայ աշխատանքից ծլած ու ծաղկած գիտութեան և նանրամարդկային իդէալների ծաղիկը, որ աճել է այս երկրում, այնտեղ, քո ստորուկ երկրում, չորանալու և թառամելու է :

Մինչ մեր բարեկամը ենթարկված էր այս ներքին այնպիսի թանաք, աւրելակը բոլորովին անհերքելի թանաք : Ազամայ մուրթը տարածվեց ժնէւի վրա . լճի բոլորովին հարթ, կարծես յղկված մակերեւոյթից բարձրացող գոլորշին նուրբ և աննկատելի չերտերով կանգ առաւ լճի եւ եթերի մէջ : Լճի եզերքը ընկղմվեց մի սեւ սակ անբացատրելի մեղմ խաղաղութեան մէջ, որ առհասարակ անզգա-

լի կերպով երեւան է գալիս արեգակի անյայտանալուց յետոյ :

Երիտասարդը կարծես սթափվեց . նա մեղմ կերպով շարժեց իր գլուխը, զլխարկը վերցրեց և սկսեց չիլել իր ճակատը : Մի քանի վարկեան ուղիղ ջրի մակերեւոյթային հորիզոնին նայելով, վեր կացաւ տեղիցը և իր քայլերը ուղղեց դէպի լճի ձախ ափը :

Հարիւր քայլ չարած՝ նա կանգ առաւ մի գեղեցիկ խանութի առջեւ, ուր, ապակիների ետեւը, ի ցոյց էին դրված սեղանի բազմատեսակ գեղեցիկ զարդեր իւզաներկ և լուսանկար պատկերներ : Նա սկսեց թափառող նայածքով դիտել ի ցոյց զբրված իրերը, բայց, մի քանի վայրկեան չանցած, նրան մեղմութեամբ հրեց մի միջանասակ, շագանակագոյն մազերով, երկար դէմքով ու վառվռառուն, մութ գեղին աչքերով օրորող, ու Քրանսերէն լեզուով ասեց .

— Շատ սպասեցնել տւի՞, Վահան, կարծեմ բաւական ուշացել եմ :

— Ոչ, այնքան չես ուշացել, սիրելիս :

Էհ, հիմա ո՛ւր եմք գնում : Գը-

սի գաղթականները Սուլթանին ծախքովը տեղափոխել Կրէտէ, այնտեղէն գաղթած թուրքերուն տեղը վերաբնակելու :

Ֆրանսական թերթը այս որոշումը գործնական համարելով հանդերձ, կը նկատէ որ բացի այդ երկու տէրութիւններու համաձայնութիւնը, պէտք էր և համաձայնէին թէ գաղթող հայերը և թէ Կրէտէի կառավարութիւնը :

«Թան»ը կենթադրէ որ ուսէն քշուող, իսկ թուրքէն մերժուող հայերը պիտի համաձայնին երթալ Կրէտէ :

Կրէտէն, այդ բարեբեր կղզին կը զրկուի թուրք երկրագործ տարրէն, երկրագործ ձեռքերու պէտքը կը զգացուի, ատոր համար ալ հայերը հոն լաւ պիտի ընդունուին :

Յարգելի լրագիրը այս բոլորի հիման վրայ, Սուլթանի գաղափարը թէ բարի և թէ գործնական կը գտնայ :

Երանի մեղի, գուցէ վաղն ալ թուրքը և ուսը համաձայնին իրենց բոլոր հպատակ հայերը կորի անապատը գաղթեցնել :

Իսկ մեր հայրենիքը . . .

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պ. Մինաս Զերազ «Շարժում»ի մէջ կարդացած ըլլալով որ Ռուսչուքէ 100 ֆրանք զրկուեր է Լահէյի պատուիրակին, կը խնդրէ մենէ ծանուցանել թէ ինք Վառնայէ զատ ոչ մի քաղաքէ դրամ ստացած է :

Պ. Զերազ թո՛ղ հանգիստ ըլլայ . Ռուսչուքը այդ դրամը զրկած է Վառնայի յանձնարարութիւն, պատուիրակին ուղարկուելիք գումարին միացնելու :

— Յունիս 21ին Լահէ, երիտասարդ թուրքերու կազմած ժողո-

վի մէջ, Պետրոս Անմեղիկեան Սուլթանին գէժ խիստ լեզուով խօսած լինելու պատճառաւ դատի էր կանչուեր հայկազական կառավարութեան կողմէն :

Անցեալ օր դատը տեղի ունեցաւ . Պ. Անմեղիկեան իր ըսածները չուրանալով և կտրուկ լեզուով խօսելով հանդերձ ազատ արձակուեցաւ :

— Գերմանական թերթերէն մէկուն Պոլսոյ թղթակիցը կը գրէ .

«Հոս նամակներ են ստացուած, որոնցմէ կիմանանք թէ քրդական համախօսիչի գունդ մը, հայ յեղափոխականներ փնտռելու պատրուակով թալներ է Բուլանընը, Մուշ գաւառի քանի մը գիւղեր, Խօշ-Կէլտի մեծ գաւառակը : Շատ մը խառնակութիւններ տեղի ունեցեր են :

— Կաթողիկոսը Սեւանի և Հազարծինի վանքերը այցելելէն վերջ, Մեծ Լարաքի լիւսէյի վրայ, վերադարձած է Էջմիածին :

— Էջմիածնէն «Մշակ»ին կը գրեն .

Միաբանների համար բաղնիք մը կը շինուի, ուր պէտք է միմիայն միաբանները և ճեմարանի աշակերտները յաճախեն : Որու խոր հուրդով շինուելը յայտնի է և սակայն տեղը շատ անյարմար է և առողջապահական տեսակէտէ բոլորովին վնասակար :

Նոր բաղնիքին շինութիւնը կը գտնուի հանգուցեալ Երեմիա եպիսկոպոսի միաբաններու համար շինած փառաւոր շինութեան և տպարանին քովը :

Կը կարծենք թէ բաղնիքին միակ նպատակն Երեմիա Սրբազանի փառաւոր շէնքը տգեղացնելն է :

— Ռուս բանաստեղծ Պուշկինի հարիւրամեակը տօնած է և Էջմիածնի Գէորգեան ճեմարանը :

— Լուր կայ թէ Գէորգեան ճե-

մարանի տեսուչ Պ. Կոստանեան հրաժարած է տեսչութենէն : Կը կարծուի թէ ուսուցչական խումբին մէջ անհամաձայնութիւն կայ, որովհետեւ ուսուցիչներ կը պատրաստուին ուրիշ գործերու մէջ պաշտօն ձեռք բերելու :

— Բեդերսպուկրի համալսարանը աւարտած են հինգ հայեր : Առաջին կարգի տիպլոմով չորսն, իսկ երկրորդ կարգի մէկը :

— Իտալացի բրոֆէսէօր Լիբէրտօ Փանօտպիէի կենսագրական աշխատութիւն մը հրատարակած է Անդրէաս Արժրունիի մասին, ուր համառօտ տեղեկութիւն կայ և հանգուցեալ հայ գիտնականին երկասիրութիւններու մասին :

— Կովկասեան և մասնաւորապէս հայ երաժշտութեան ուսումնասիրութեան մէջ յայտնի կոյր Նիկողայոս Տիգրանեան հրատարակած է իր վեցերորդ երկասիրութիւնը «Շահնազ» անունով, Այս նոր երաժշտական երկասիրութիւնը յարմարացած է ջութակի հետ նուագելու :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Թուրքիոյ մասին գրուած միջոցին մարդ շարունակ ստիպուած է խօսիլ այդ հինցած, խարխուլ և իր շուրջը բարոյական ու ֆիզիքական մահ սիրող ընթերցիւն խորտակման մասին :

Ընթերցիւն, որ ներքուստ որչափ հիւանդ, խորտակուելու մօտիկ է, արտաքուստ այնչափ գոռոզ, լիբը և իր զօրութեան փայլը ցուցնել ճգնող :

Մեծ և անկախ ժողովուրդները կը հասկնան թէ թուրքին զօրու-

թիւնը վաղանցուկ է և մօտիկ իր վերջին շունչը փչելու վայրկեանին . բայց փոքրիկ, հայերուս պէս այդ ընթերցիւն տակ ճնշուած ու հեծող ժողովուրդները, որոնք շատ մը տարիներ ճիղեր թափած են և զոհեր տուած ազատուելու այդ ընթերցիւն թէն, կընկճուին անոր զօրութեան խափուսիկ վայլէն, և կարծես յոյսերնին կտրելով՝ կուզեն որոշում տալ թէ՛ թուրքը զօրեղ է և մեր բոլոր ճիղերը ուսուած զոհերը զուր են անոր ճանկերէն ազատուելու համար :

Բայց կը սխալին . չարաչար կը սխալին բոլոր անոնք, որոնք այդպէս կը կարծեն և կը հաւատան :

Թուրքիա կը նմանի հինցած մեծ տան մը, որուն հիմերը շատ փտած, հինցած են, և տունը զօրեղ ցնցումի մը կապասէ ամբողջովին տապալելու համար : Ճանտէրը այդ լաւ կը հասկնայ . բայց միջոց, հնար չունի տունը հիմնովին նորոգելու : Ներսի փտած մասերը հասարակութեան աչքին չեն երեւնար և անանկացած տանտէրը, ուզելով իր նախկին շուքը պահպանած ըլլալ, «զոռ»ը կուտայ տան արտաքինը նորոգելուն : Եւ ահա տունը կը նորոգուի, կը ներկուի, կը սուաղուի : Փողոցէն անցնողը կը հիանայ շքեղ տան արտաքինը տեսնալով, առանց գիտնալու որ փոքրիկ երկրաշարժէ մը այդ շքեղ տունը փողոցի ամենէն փոքրիկ տուններէն շուտ պիտի կործանի : Եւ Թուրքիա կը սպասէ այդ երկրաշարժին . . .

ՀԻՒԼԷ

—)(—

նանք այնպիսի մի տեղ, որ բոլորովին մեզ խանգարող չը լինի :

— Իմ տանից լաւ տեղ չկայ . այս օր ես ընկերներին յայտնել եմ որ զիւր պէտք է գնամ, բարեկամներս մնաս բարեաւ ստեղծու : Այնպէս որ ոչ ոք ինձ մօտ չի գայ :

— Շատ լաւ : Վահանը եւ օրիորդը ճամբա ընկան դէպի տուն :

Կէս ժամից արդէն Վահանը եւ Մարին (օրիորդի անունը) նստած էին ուսանողական մի համեստ սենեակում : Փոքրիկ լամպի մեղմ լոյսը հազիւ լուսաւորում էր սեղանը եւ նրա շուրջը : Վահանը խօսում էր թէ եւ մեղմ կերպով, բայց զազտնի յուզումով :

— Ինչ ես ասում Մարի, քո ուզածը կատարել բոլորովին անհնարին է : Ես հաւատում եմ որ դու անկեղծ ես . հաւատում եմ որ դու պատրաստ ես կեանքը բաժանել ինձ հետ, որ չպի էլ այդ կեանքը դառն լինի . բայց ես անկարող եմ : Ես գնում եմ այնպիսի մի տեղ ապրելու եւ գործելու, ուր կեանքի

բոլոր պայմանները, առանց բացառութեան, բոլորովին գոյութիւն չունեն այստեղ : Ես ինքս, որ այն երկրի զաւակն եմ, կասկածում եմ թէ պէտք է կարողանամ գիմանալ : Իսկ դու ինչպէ՞ս ես գիմանալու :

Միթէ վարդը կարող է ապրել հիւսիսային երկրում . միթէ ձըն-ծաղիկը կարող է ապրել Սահարայի մէջ : Դու, ազատ երկրի զաւակ, միթէ կարող ես ապրել այնտեղ, ուր մարդիկ ստրուկներ են, բառի ամենալայն նշանակութեամբ :

— Այո, կարող եմ : Դու միթէ չէիր կարող այստեղ ապրել : Ինչո՞ւ ես գնում այն ստրուկների մէջ . չէ որ ուզում ես աշակցել այն գործին, զժարին ու բարդ գործին, որի նպատակն է այդ ստրուկ մարդկանցը ազատել : Եւ այսպիսի մի ժամանակ, երբ դու ազատութեան զինք գիտես, համը առիկ ես, գիտես եւ թէ ինչ է ազատութիւնը . բայց եւ այնպէս ազատ երկիրը թողած, գնում ես ստրուկների մէջ ապրելու, ինչո՞ւ, որովհետեւ ուզում ես նրանց օգնել : Ահա ես էլ ուզում եմ գալ քեզ հետ, նրանց օգնելու : Ինչո՞ւ համար ես

սովորեցի քո մայրենի լեզուն Դու իմը գիտէիր . մենք մեր զգացմունքները կարող էինք միմեանց յայտնել իմ լեզուով : Բայց ես սովորեցի քո լեզուն, ոչ միայն քեզ հաճելի լինելու համար, ոչ միայն քեզ սիրելու համար, այլ եւ նրա համար որ սիրեցի քո տանջվող ստրուկ ժողովրդին, որը ամէն ճիգ թափում է ազատվել այդ անարգ գրութիւնից : Սիրեցի եւ այն գործը, որ ծառայում է քո ստրուկ, բայց ազատութեան ծարաւով այրվող ժողովրդի ազատագրութեանը : Չէ որ դու էլ ինձ ես սիրում : Ինչ բարոյական իրաւունք ունես մերժելու ինձ միանալ քեզ հետ իբր ամուսին, իբր գործի ընկեր, իբր մի մարդ, որ նոյնքան փափագ ունի քո ժողովրդին ազատ ու լուսաւորված տեսնելու, որչափ քո բոլոր հայ ազնիւ եւ հայրենիքին նւիրված ընկերները ու ընկերուհիները : Չէ Վահան, քո միտքում, ինձ քեզ հետ չը տանելը միայն երկու պատճառ կարող է ունենալ—կամ այն, որ դու ինձ այնքան զօրեղ կերպով չես սիրում, եւ կամ թէ կասկածում ես իմ բարոյա-

կան ուժերի եւ կամքիս հաստատութեան վրա : Երկու դէպքում էլ դու ինձ մահացու կերպով վիրաւորում ես :

Վահանը էլ չկարողացաւ իրան զսպել . նա ձեռքը փարեց Մարիի վզովը, նրա գլուխը քաշեց դէպի իրեն եւ ուրախութեան ու լիակատար երջանկութեան արցունքները աչքերին համբուրեց օտարուհու շրթութունները, ճակատը եւ շրջնալով արտասանեց .

— Շատ լաւ Մարիս : Գնանք միասին, ինձնից երջանիկ մարդ չը կայ : Գնանք միասին ասիական բռնակալութեան տակ խեղճվող ու խաւարի մէջ ընկղմած ժողովրդի մէջ գործելու . ոչ մեծ հրաշքներ անելու, անակնութիւնը ունենալով, այլ իբր համեստ, ազատութեան եւ մտաւոր լուսաւորութեան զինւորներ :

— Այո, պատասխանեց Մարի, զնանք, մեր մարդկային ամենատարակաւն պարտականութիւնը կատարենք . . .

Եւ նա գնաց . . .

ՎԱՐԴՕ

—)(—

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսական դեսպան Ջինովիեզի, անցեալ օրուան ընդունելութեան մէջ բողոքեր է Ռուսական սահմանին մօտերը քրդերուն ըրած խառնակութիւններուն համար:

— Թուրք զօրքերը եմէնի մէջ նորէն յաղթուեր և ստիպուեր են նահանջել դէպի Սանա:

— Տրապիզոնի վալին կը հաղորդէ թէ զինեալ քրիստոնեայներու հրոսակները պարսից սահմանէն անցնելով, մի քանի անգամ յարձակում գործեր են թիւրք գիւղերու վրայ. իսկ քանի մը օր առաջ սրի են անցուցած վրանին մէջ քնացած գիւղական տանուտէրին ամբողջ ընտանիքը:

Սպանութեան տեղը քրիստոնեայ մը մնացեր է, որ սպառնալիքներու ազդեցութեան տակ խոստովանած է թէ հրոսակախուստը կազմուած է քրիստոնեայներէ, որ երդուած են վրէժ լուծել թիւրքերէն:

և, աւելի ապահով կերպով իրենց նպատակին հասնելու համար, հրոսակախուստը Շիա մահմետական աղանդը ընդունած է:

Այս հանգամանքը երկուրդին առիթ տուած է կոստանով վերաբերուիլ դէպի պարսկական կառավարութիւնը:

Այս պատճառաւ շահ ներկայացուցիչը, Միրզա Մահմուտ խան, ամէն օր կայցելէ Սուլթանի պալատը:

Ինչ կը խօսին հոն յայտնի չէ: Միայն ստանալիքով և վառահեղ դէմքով խանը պալատէն դէմքը բոլորովին փոխուած դուրս կելլայ:

— Մէջվէրէթէն կիմանանք որ Ապտուլլահ փաշան Սուլթանէն հրաման ստացած էր Ահմէտ Բիդային Լահէյի մէջ, տուէլլօի հրաւիրելու, զանի սպանելու համար:

Լուրը տուողը իր կողմէն կաւելցնէ:

Մեծ մարդասպանը իսկապէս զարմանալի ընդունակութիւն ունի ամէն տեղ գտնուելու: Ան կերեւնայ նոյն իսկ այն քաղաքին մէջ, ուր մարդիկ կերպով համաշխարհային խաղաղութեան մասին:

Կեցցէ սուրը, կաղաղակէ նաբայց ոչ խաղաղութիւնը...

— Բիէր Լօտի, ֆրանսական յայտնի վիպագիրը որ արտաքին գործոց նախարարութեան կողմէ ուղեւորած է դէպի Պարսկաստան և Աւզանիստան, շուտով թիֆլիզ պիտի հասնի և քանի մը օր պիտի մնայ հոն:

— Ս. Բեդերպուրկէն «Իայլը-թէլէկրաֆ» լրագրին կը հաղորդեն թէ Չարը ուքազ մը պիտի յայտարարէ, որուն մէջ պիտի յայտնէ թէ իր ժառանգը անչափահաս եղած միջոցին մեծ իշխան Միքայէլ Ալէքսանտնովիչը, Չարին եղբայրը, պիտի ըլլայ անոր խնամակալը:

Իսկ եթէ Չարը մեռնի առանց մանչ զաւակ մը ունենալու, ռուսական

զահը բարձրանալու իրաւունքը պէտք է անցնի Միքայէլ Ալէքսանտրովիչին:

որովհետեւ իսկական ժառանգ մեծ իշխան Կէօրգին, իր հիւանդութեան պատճառաւ, բոլորովին պիտի հրաժարի կայսերական զահը բարձրանալէ:

— Մօտ ժամանակներս հարաւային Հնդկաստանի մէջ եղած խռովութիւններու մասին հասած պաշտօնական տեղեկութիւնները կը հաստատեն որ 967 տուն այրուած են յունիսի ճին, 25 հոգի մեռած, 6ը վիրաւորուած, և 93 հոգի ձերբակալուած:

Իսկ դատի ենթակողներու թիւը 900 ի կը հասնի:

Երեք հարիւր եւրոպացի ոստիկաններէ կազմուած վաշտ մը, ինը սպայով, հինգ տարի պիտի մնայ խառնակութեանց շրջանակին մէջ:

խռովութիւնները յառաջացած են դասակարգային թշնամութենէ: Լօնտօնի մէջ կը զարմանան որ այս խռովութիւնները այնքան անսպասելի և յանկարծակի եղան:

ու, Մատրասի նահանգին վարչութիւնը նախատեսած չէր:

— Տրէյֆիւս հասած է Փրանսա. կը գտնուի Բէնէ քաղաքի բանտին մէջ, ուր և քանի մը օրէն կրկին պիտի ներկայանայ զինուորական դատարանին, նորէն դատուելու համար:

Քաղաքը, ուր Տրէյֆիւս կը գտնուի, բոլորովին խաղաղ է. հակադէմոստրացիան ցոյցեր չը կան:

— Հոչակաւոր գնդապետ Պիկար կաշխատի նորէն մտնալ զինուորական ծառայութեան մէջ:

պատճառաւորով որ ինքը դատաւարուած է Կարիզի զինուորական դատարանի միջոցաւ, այն ինչ իր գործը կը վերաբերեր Սուսի զինուորական դատարանին:

— Չինաստանի մէջ նորէն գրգռուած են եւրոպացիներուն դէմ:

Կատմի գաւառին մէջ չինները յարձակում են գործեր գերմանական երկաթուղիի գիծը շինողներուն վրայ:

Ընդհարում տեղի ունեցած է չիններու և գերման զինուորներու միջեւ. ինը չինացի սպաննուած են:

— Նիցայի դատարանը բաւական ծանր պատիժով դատաւարուած է իտալացի ժեներալ Ժիլետային, որ ձերբակալուած էր ֆրանսական սահանագծին ամբուլթիւնները ու գիրքերը ըրտեսելուն համար:

Դատարանին մէջ գտնուած ֆրանսացի հասարակութիւնը այդ դատավճիռը մեծ ոգեւորութեամբ ընդունեց:

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Պուրկազ. Մուշեղ Սարաֆեան չափուշ Դրէյֆուսի քով: Ստացանք Դիտողի մասին գրուած ձեր նամակը: Աւելի լաւ կըլլար որ բոլոր չափուշներդ միասին լուրջ պատասխան մը գրէիք Դիտողին: Մենք հաւատացած ենք որ Դիտող այն ժամանակ կը պատասխանէ եւ մեղաւորներու անունները կուտայ:

Չը մտնաք նամակը գրագէտ մարդու մը գրել տալու, որ խմբագրութիւնս հասկնայ թէ ինչ ըսել կուզէք:

— Ալեքսանդրիա, Վ. — Ստացանք 69 ֆրանքը. շնորհակալութիւն: Սխալմամբ եղած է:

Ամերիկա, Բրոքլինքս. — Ստացանք 7 ու կէս սօլարը:

Վառնա Պ. Սիրաք Մարգարեան: Ձեր Գասպարին իր պատասխան գրութիւնը ստացանք: Այս Գասպարը ներկայ չէ եղէր ձեր քննութիւններուն, նա Վարդօի արտայայտած կարծիքն է դրած յօդուածի մէջ:

Վարդօն ձեզ շնորհաւորած է ձեր աշխատութեանը համար եւ նորէն հրապակաւ կը կրկնէ: Բայց այդ չինականեր թէ իրաւունք չունէր խորհուրդ տալու որ մեքենական գործողութեանց վրայ աւելի քիչ ուշք դարձնէք:

Երեւակայական թագուն նպատակներ չունինք. հանգիստ եղէք եւ ի դուր տեղը մի վրդովուիք: Իսկ թէ ձեզ այնքան հուսա ուսուցիչ կը կարծէք, որ ձեզի ոչ մի նկատողութիւն ընել չէ կարելի, այդ ուրիշ խնդիր...:

Սորոնուրդ կուտանք Գասպարի գրութիւնը նորէն կարդաք:

Ձեր գրութիւնը չի հրատարակուի, ոչ վախնալուս համար, այլ որովհետեւ լոկ կրքի եւ բարկութեան արդիւնք լինելով մէջը իմաստ չկայ:

Խնդրը մեզի համար բոլորովին փակուած է:

— Վառնա, Դիտող մը. — Ձեր նամակը ստացուած է. շատ շնորհակալ ենք ձեր արտայայտած զգացմունքներու համար. սակայն սպագրել չենք կրնար, որովհետեւ ձեր իսկական անունը ստորագրած չէք: Լրագրութեան օրէնքն է իսկական անունը չը կրող նամակները չը սպագրել. որչափ ալ խմբագրին համար հաճելի ըլլար նամակին բովանդակութիւնը:

ՊՕՐՍԱ

Table with 2 columns: Item name and price. Includes items like Վառնա 26 Յունիս, ՊՈՒՂՏԱՅ, Վակօն, Արապա, ԱՐԲԱ, Լիպրա, ՄԻՍԻՐ, Վակօն, Առապա, Կիւնտէ, Առապա, Առապա մուամէլէսի նաբուլոն 21 ֆրանք

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂՆԸ
Բանաւո-Բարիպան
Գրեց ԲԱՐԱ-ԳԱՍՊԱՐ:
Պուրկարի մէջ գրեց 50 սանթիմ, իսկ արտասահմանի համար 60 սանթիմ:
Ցանկացողները թող գրին Շարժումի խմբագրութեան:

« Բ Ա Ն Ա Ս Է Ր »
Հանդէս Հնախօսական, Պատմական, Լեզուաբանական եւ Քննական:
Տնօրինութեամբ Պ. Կ. Յ. ԲԱՍՄԱՔՅԱՆԻ.
Տարեկան 20 ֆրանք ամէն տեղ 4 գրքի համար, իսկ մէկ գրքը, 100 էջով, 6 ֆրանք:
Հասցէ՝
M. Basmadjian
112, B-d. Rochechouart, 112
Paris

« Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք »
Ազգային շարժաթերթ, տարեկան մէկուկէս տօյար, իսկ արտասահմանի համար 10 ֆրանք:
Հասցէն՝ Նմբ. Հայրենիքի
628 Third Avenue
New York City
(U. S. A.)

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐՇՈՒՄ»
Կը սպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցետոմս, նամակագրուի, հարսանեկան հրաւիրագիր, մահապաշտ, ինչպէս նաև պրօչիւններ:
Գրինքը յոյժ գիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:
ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

ՎԱՐՆՕ
ԵՐԿՈՒ ՍԷՐ
(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ ԿԵԱՆՐԻՑ)
(Գ ի ն 1 Փրանք)
Մնացած սակաւաթիւ օրինակները կը ծախուին Վառնաի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպէ Տ. Անտօն Կոչի մօտ, Ռուսչուք՝ Հայկ Մալախեանի սրճարանը:

ԿՈՒՁԻՔ ՀԱՐՍՏԱՆԱԼ
Դիմեցէ՛ք
Մ. Թիւթիւնճեան եւ ընկ. ի Ռուսչուք
Ուր ըստ առաջնոյն կը վաճառեն, Սօֆիա քաղաքի՝ Պուրկարական կառավարութեան կողմէ վաւերացած վիճակահանութեան Բ. շրջանի տոմսակները:
Օտար երկրներէ յանձնարարութիւններ եւս կընդունուին:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печати ца „Взаимность“ Варна